ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. սեպտեմբերի 27-ից 29-ը Ժնև (Շվեյցարիայի Համադաշնություն) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանի գործուղման վերաբերյալ

1. <u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>

   Արծվիկ Մինասյան

2. <u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>

   ՀՀ բնապահպանության նախարար

3. <u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>

   27-29.09.2017թ. Ժնև (Շվեյցարիայի Համադաշնություն)

4. <u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>

   ՄԱԿ-ի Շրջակա Միջավայրի Ծրագիր (UNEP)
   Շվեյցարիայի Համադաշնության նախագահ

5. <u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>

Մասնակցություն՝ Սնդիկի վերաբերյալ Մինամատայի կոնվենցիայի Կողմերի համաժողովի առաջին խորհրդակցության բարձր մակարդակի հանդիպմանը:

6. <u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>

2017թ. սեպտեմբերի 27-ից 29-ը կայացավ Սնդիկի վերաբերյալ Մինամատայի կոնվենցիայի Կողմերի համաժողովի առաջին խորհրդակցության բարձր մակարդակի հանդիպումը՝ գլոբալ մակարդակով սնդիկի աղտոտման դեմ պայքարում անհրաժեշտ

հեռանկարային գործողությունները բոլոր տարածաշրջաններից հնչեցնելու և առնչվող սոցիալ- տնտեսական հետևանքներն ընդգծելու նպատակով:

Բարձր մակարդակի հանդիպման բացումը, որը կազմակերպվել էր Շվեյցարիայի կառավարության կողմից, տեղի ունեցավ Շվեյցարիայի Համադաշնության նախագահ և շրջակա միջավայրի, տրանսպորտի, էներգետիկայի և կապի նախարար տիկին Դորիս Լոյտհարդի բացման խոսքով:

Հանդիպման նպատակն էր բարձր մակարդակով նշել Սնդիկի վերաբերյալ Մինամատայի կոնվենցիայի ուժի մեջ մտնելը: Հանդիպումը թույլ տվեց ձևավորել բարձր ամբիցիաներ, որոնք միջազգային հանրությունն իր առջև դրել է սնդիկի և սնդիկի միացությունների բացասական ներգործության հիմնախնդիրների լուծման համար, ինչպես նաև այդ ամբիցիաների իրագործման կարևորությունը:

Նախարարների կողմից հնչեցվեցին ուղերձներ՝ Մինամատայի կոնվենցիայի ներքո իրականացվող գործողությունների հարցերի վերաբերյալ:

Կայացան նաև նախարարական «կլոր սեղաններ», որոնց ընթացքում տեղի ունեցան ինտերակտիվ և դինամիկ քննարկումներ՝ կապված հետևյալ հարցերի հետ.

- ինչպես կարող է սնդիկի բացասական ազդեցությունից մարդու առողջության և շրջակա միջավայրի պաշտպանության նպատակն ինտեգրվել ազգային և տարածաշրջանային մակարդակներով հասարակական առողջապահության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտների ռազմավարություններին,
- ինչ կարող են առաջարկել մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտների շահագրգիռ կողմերը սնդիկի բացասական ազդեցության, զարգացման ոլորտում սնդիկի հետ կապված առավել լայն հիմնախնդիրների լուծման համար,
- ինչպես կարելի է Կոնվենցիային սատարելու նպատակով բոլոր մակարդակներով ուժեղացնել քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակների համաձայնեցվածությունը և ինչպես կարող է կառավարումն ընդգրկել բոլոր սեկտորները և շահագրգիռ կողմերը,
- որոնք են տեղային և ազգային մակարդակով Մինամատայի Կոնվենցիայի իրականացման անհետաձգելի խնդիրները,
- ինչպես կարող են Կոնվենցիայի նպատակներն ինտեգրվել և ներառվել կայուն զարգացման ազգային ծրագրերում,
- ինչպես կարելի է լուծել սնդիկի օգտագործման առկա պրակտիկայի հիմքում դրված այնպիսի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, ինչպիսիք են օրինակ ոսկու ոչ

արդյունաբերական արդյունահանումը և թափոնների օգտահանումը, որոնք առնչվում են ինչպես հողին, այնպես էլ ջրին,

- հսկողության և մոնիթորինգի ինչպիսի տարբերակներ կարող են իրագործվել՝ ջրային օբյեկտներ սնդիկի արտանետումները կրճատելու նպատակով,

- ինչպես կարող են այլ քիմիական նյութերի արդյունավետ կառավարման համար կիրառվող միջոցառումները կիրառելի լինել սնդիկի հարցերի կարգավորման համար: Այս հարցով կայացած «կլոր սեղանի» ընթացքում ես ընդգծեցի, որ ՀՀ բնապահպանության նախարարության քաղաքականությունը քիմիական նյութերի և թափոնների կառավարման ոլորտում նպատակաուղղված է կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը, ինչպես նաև նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը: Թափոնների կառավարման ոլորտը կանոնակարգելու նպատակով մշակվել է մի շարք իրավական ակտեր՝ ընդերքօգտագործման, ինչպես նաև նախատեսվում է <<Քիմիական նյութերի մասին>> օրենքի նախագծի մշակումը: Միևնույն ժամանակ ներկայացնում եմ <<Սնդիկի մասին>> Մինամատայի կոնվենցիայի վավերացման գործընթացի իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում (ելույթը կցվում է):

7. <u>ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ</u>

Խորհրդակցության ընթացքում ճեպազրույցներ եմ ունեցել ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի գործադիր տնօրեն Էրիկ Սոլհայմի, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր տնօրեն և տարածաշրջանային ներկայացուցիչ Յան Դուսիկի, Համաշխարհային Բնապահպանական Հիմնադրամի գործադիր տնօրեն և նախագահ Նաոկո Իշիի, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի օգնական Մագդի Մարտինես-Սոլիմանի և ՄԱԿ-ի ուսուցման և հետազոտությունների ինստիտուտի քիմիական նյութերի և թափոնների կառավարման ծրագրի ավագ խորհրդական Ջորջ Կարլագանիսի հետ:

ՀՀ բնապահպանության նախարար

Ա. Մինասյան